Ժ. Ա. ՄԱՆԱՍՅԱՆ

# ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ԲԱՑ ԴՈՒՆԵՐԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱԽՈՂՈՒՄԸ

Եգիպտոսի սոցիալ-տնտեսական կյանքում 70-ական թթ. սկիզբը բնութագրվում է նշանակալից փոփոխություններով։ Պրեզիդենտ Նասերի հանկարծահաս մահը, որը հանգեցրեց երկրում քաղաքական ղեկավարության փոփոխմանը, տեղի ունեցավ այն պահին, երբ ճգնաժամային վիճակում գտնվող տնտեսության ոլորտում անհրաժեշտություն էր դարձել անհապաղ միջոցառումների ձեռնարկումը։ Երևան էին եկել տնտեսական աճի նվազման նշաններ՝ 1969—1970 թթ. 6,9 տոկոսի դիմաց 1970—1971 թթ. այն իջել էր 4,8 տոկոսի։ 1967 թ. իսրայելական ագրեսիան նյութական մեծ կորուստներ պատճառեց, ռազմական ծախսերն աճեցին, որոնց ծավալը 70-ական թվականների սկզբում համապատասխանում էր Եգիպտոսի ազգային համախառն արտադրանքի 25 տոկոսին։ Մոլեգնում էր դրամարժեքի անկումը, չէր բավականացնում մթերքը, համախառն արտադրանքը կտրուկ նվազում էր։

Զարգացող երկրների տնտեսության պետական հատվածի սովորական թերությունները պատճառ և առիթ ծառայեցին հետադեմ տարրերի ելույթների համար, որոնք սկսեցին ավելի հաճախակի և ավելի բարձրաձայն խոսել պետհատվածի վերացման և տնտեսության ղեկավար բարձունքները մասնավոր ձեռնարկություններին հանձնելու մասին։ Այդ ժամանակ առաջ եկած «ուղու ճշգրտման շարժումը» եգիպտական հեղափոխության կերպարանափոխման ընթացքի նախերգանքն էր։

Եգիպտական «նոր կապիտալիստները», որոնց առաջնահերթ նպատակը մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը պետության վերահսկողությունից դուրս բերելն էր, իսկ վերջնականը՝ երկրի տնտեսության առավել շահութաբեր ճյուղերում տիրապետող դիրքերի



2—635

ՀԱՅ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գրավումը, ոգևորված կառավարության աջակցությունից, հանդես էին գալիս հենց պետական ձեռնարկության գաղափարի քննադատությամբ, պատճառաբանելով, որ պետական ձեռնարկությունները փաստորեն մշտապես աշխատում են ոչ լրիվ կարողությամբ, քանի որ ներքին շուկայում նրանց որևէ մրցակցություն չի սպառնում։ Այլներ էին հնչում, որոնք պահանջում էին պետական հատվածի գլխավոր վարչությունների արժեթղթերի վաճառք, դրամատնային, վալյուտային ու հարկային համակարգի վերափոխման, արտահանման—ներմուծման գործառույթների բնագավառում պետհատվածի դիրքերի թուլացում։

«Նախկին ժամանակաշրջանի սխալների ուղղման» պատրվակով Եգիպտոսի պրեզիդենտ Սադաթը 1971 թ. փետրվարին հայտարարեց հինգ հազար խոշոր հողատերերի՝ նախկինում խլված հողերի դիմաց դրամական փոխհատուցում տալու, 800 խոշոր կալվածատերերի հողը վերադարձնելու և բռնագրավման քաղաքականությունից հրաժարվելու մասին։ Ուշադրության են արժանի այդ նույն տարում հրապարակված երկու օրենքները՝ «Արաբական կապիտալի ներդրումների մասին» (№ 65) և «Արտաքին առևտրի և զարգացման եգիպտական դրամատան հիմնադրման մասին» (№ 77), որոնք մատչելի էին դարձնում Եգիպտոսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը[2]։

Համաձայն № 65 օրենքի արաբական և այլ օտարերկրյա կապիտալ ներդրումների բերած շահույթները հինգ տարի ազատվում էին եկամտահարկից, օգտագործած կապիտալ ներդրումներից ստացված մաքուր շահույթը կարող էր փոխադրվել արտասահման ներդրման՝ վալյուտայով։ Օրենքը երաշխավորում էր ներդրման պահից հինգ տարի անց հետագա հինգ տարիների ընթացքում օտարերկրյա կապիտալի դուրս բերում երկրից։ Օտարերկրացի մասնագետներին իրավունք էր տրվում օտարերկրյա վալյուտայով արտասահման փոխադրել իրենց աշխատավարձի կեսը։

№ 77 օրենքը նպատակ ուներ արտասահմանից արտոնյալ պայմաններով օտարերկրյա վալյուտայով միջոցներ ներգրավել պետական և մասնավոր ընկերությունների և ուղղակի ներդրումային գործարքների համար։ Բանկային ավանդները աղգայնացման կամ բռնագրավման ենթակա չէին, ավանդատների եկամուտները զերծ էին մնում հարկումներից, իսկ դրամատան գործառույթները դուրս էին մնում եգիպտական օրենքների իրավասությունից։

Այժմ արդեն ակնհայտ դարձավ նոր ղեկավարության տնտեսական կողմնորոշումը։ Դա հույսն Արևմուտքի հետ կապելու, եգիպտական տնտեսության ֆինանսավորման համար օտարերկրյա մասնավոր և պետական կապիտալի ներգրավման նպատակով ներդրումային մթնոլորտ ստեղծելու քաղաքականությունն էր։ Նոր ուղղության սկզբունքները ձևակերպվեցին 1974 թ. հրապարակված «Հոկտեմբերյան աշխատանքային փաստաթղթում», որը պաշտոնապես հաստատեց Եգիպտոսի սոցիալ-քաղաքական կողմնորոշման կտրուկ փոփոխությունը։

«Բաց դռների» քաղաքականությունը իրավական հենքի վրա դնելու և օտարերկրյա կապիտալին աղգայնացումից ու բռնագրավվումից երաշխիքներով ապահովելու համար, այդ նույն 1974 թ. եգիպտական կառավարությունը հրապարակեց «Արաբական և օտարերկրյա ներդրումների և աղատ գոտիների մասին» № 43 օրենքը[3]։ Չորս գլխից բաղկացած այդ օրենքը (1—«Արաբական և օտարերկրյա ներդրումները», 2—«Բաղմադգ ձեռնարկախմբերը», 3—«Արաբական և օտարերկրյա ներդրումների և աղատ գոտիների գլխավոր վարչությունը», 4—«Աղատ գոտիները» օտարերկրյա կապիտալին հնարավորություն ավեց մուտք գործել արդյունաբերություն, լեռնարդյունահանություն և դրամատները, այսինքն՝ այն ճյուղերը, որոնք նախկինում պատկանում էին պետական հատվածին։ Աղատ գոտիներում գործող միջազգային կազմակերպություններն ու ընկերությունները աղատվում էին ամեն կարգի հարկերից։ Օտարերկրյա կապիտալը կարող էր իր գործունեությունը վարել առանց երկնչելու պետական վերահսկողությունից։ Հիմնվեց Արաբական և օտարերկրյա ներդրումների գլխավոր վարչություն։ Տնտեսության և պլանավորման մինիստրությանը ենթակա այդ վարչության հիմնական պարտականությունն էր «բաց դռների» քաղաքականության շրջանակներում հաստատել տնտեսական ծրագրերը։

1975 թ. հրապարակվեց պետական հատվածի գլխավոր վարչությունների վերացման մասին օրենքը։ Այս օրենքը անխուսափելի արդյունքն էր պաշտոնական այն հայտարարությունների, որոնք պնդում էին, թե «ամբողջ պետհատվածի միասնական ծրագրի որևէ անհրաժեշտություն չկա, քանի որ տնտեսական գործունեության յուրաքանչյուր ճյուղ, նույնիսկ յուրաքանչյուր արտադրական միավոր կարիք ունի իր զարգացման սեփական ծրագրերի, որոնք հաշվի են առնում տնտեսության այս կամ այն օբյեկտի արտադրական գործունեության առանձնահատկությունն ու յուրահատկությունը[4]։

Այսպիսով, այդուհետև պետհատվածում կենտրոնացված պլանավորման համակարգը դադարեց գոյություն ունենալուց։ Բացի այդ, պետական վերահսկիչ կոորդինացիոն հաստատությունների վերացման հետ մեկտեղ օրենքը մասնավոր անձանց թույլ տվեց ձեռք բերել պետհատվածի ընկերությունների արժեթղթեր, իսկ մասնավոր հատվածի մասնագետներին՝ մտնել պետհատվածի ընկերությունների վարչական խորհուրդների կազմի մեջ։

1975 թ. ընդհանուր ազգային արտադրության մեջ առաջին անգամ պետհատվածի մասնարաժինը նվազեց 54,5 տոկոսից՝ 53,3 տոկոսի։ Ի լրումն դրա՝ ԵԱՀ-ի կառավարական գերատեսչությունները քննարկեցին և հավանություն տվեցին պետական 95 կազմակերպությունների և հաստատությունների ապաազգայնացման հարցին, որոնց մեջ էին նաև Կահիրեի և Ալեքսանդրիայի փոխադրական ծառայությունները, ճանապարհների շինարարությունն ու շահագործումը, հողաբարելավումը, երկաթահանքային համալիրը, հեռահաղորդակցությունը և այլն։ Պետհատվածի գործարանները հնարավորություն ստացան սեփական վալյուտային ֆոնդի առկայության դեպքում և կամ օտարերկրյա վարկերով ֆինանսավորելիս, առանց նախնական թույլտվության ապրանքներ ներմուծել[5]։

Չնայած այս օրենսդրական վավերագրումներին և եգիպտական մամուլում լայնորեն գովաբանվող օգուտներին ու առավելություններին, որ ինչպես Եգիպտոսին, այնպես էլ զարգացած կապիտալիստական երկրներին իբր բերում է «բաց դռների» քաղաքականությունը, սկզբնական շրջանում եգիպտական տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումները ծայրահեղորեն դանդաղ էին աճում։ Դա առաջին հերթին վերաբերում էր օտարերկրյա մասնավոր ներդրումներին։ 1975 թ. 1974 թ. համեմատությամբ ո՛չ վարկային գործառությունների ասպարեզում և ո՛չ էլ փոխառություններ տրամադրելու գործում արևմտաեվրոպական պետություններից կապիտալի հոսքի և Եգիպտոսի հետ տնտեսական համագործակցության ծավալի մեծացում չէր նկատվում։ 1976 թ. վերջին ԵԱՀ-ի տնտեսության մեջ ներդրված էր ընդամենը 75 մլն. դոլար օտարերկրյա մասնավոր կապիտալ[6]։

Օտարերկրյա կապիտալի թույլ հոսքից մտահոգված եգիպտական կառավարությունը դիմեց նոր զիջումների։ 1977 թ. վերանայվեց 1974 թ. «Արաբական և օտարերկրյա ներդրումների և ազատ գոտիների մասին» օրենքը և № 32 օրենքով նրա մեջ փոփոխումներ մտցվեցին[7]։ Գլխավոր

փոփոխություններից մեկն էր կապիտալի և եկամուտների ոչ թե պաշտոնական, այլ փոխանակման կուրսով երկրից արտարկելու թույլատրումը։ Փոփոխությունները ընդլայնեցին նաև արաբական և այլ օտարերկրացի ներդրողների կապիտալների հնարավոր ներդրման ոլորտները։ Մտցվեց ևս մի փոփոխություն, որի համաձայն Եգիպտոսի բաժինը համատեղ բաժնետիրական ընկերությունների մեջ չպետք է լիներ 50 տոկոսից պակաս, իսկ տեխնիկա և տեխնոլոգիա մատակարարող ընկերությունները պիտի ընդունեին համատեղ արտահանող ընկերությունների տեսք։

Այս միջոցառումների հետևանքով օտարերկրյա մասնավոր ձեռնարկատիրական գործունեության որոշ աշխուժացում նկատվեց, սակայն այդ աշխուժությունը արտահայտվեց ոչ թե արդյունաբերության կամ գյուղատնտեսության մեջ, ինչպես նախատեսում էր եգիպտական կառավարությունը, այլ անարտադրողական ոլորտներում։ «Պետհատվածի ձեռնարկությունները տեղական և օտարերկրյա մասնավոր հատվածի մրցակցությանը չդիմանալով աշխատում են սոսկ իրենց կարողության քառորդով, շատերը փակվում են։ Օրինակ, պետհատվածի 235 ձեռնարկություններից 70-ական թվականների վերջին մնացին միայն 7-ը»[8]։

Չնայած ինչպես գների մակարդակի, այնպես էլ բաշխումների ոլորտի անարխիայի դեմ կառավարության միջոցառումներին, աշխատավորական զանգվածների գրությունը շարունակում էր մնալ ծանր։ 1980 թ. հունվարին ընդունված 10 տոկոսով աշխատավարձը բարձրացնելու և ապրուստի թանկացման դեմ նպաստահատուցում մտցնելու մասին որոշումը պետհատվածի աշխատավորների համար ցանկալի արդյունք չտվեց, դրամարժեքի նվազման աղետավոր չափի հետևանքով, որը 80-ական թվականների սկզբին հասավ 60 տոկոսի[9]։

«Ինֆիթահի» տարիներին անբևեռակայելիորեն աճեց կաշառակերությունը։ Այդ հսկայական շղթան սկսվում էր միջնորդներից և հասնում մինչև կառավարության անդամները։ Այսպես, ԵԱՀ-ի վարչապետի նախկին տեղակալ Ա. Սուլթանը ամերիկյան «Վեստինգհաուզ էլեկտրիկ քորփորեյշնից» ստացել էր 332 հազ. դոլար՝ 30 մլն. դոլարի էլեկտրատեխնիկական սարքավորում մատակարարելու գործարքագիր ստորագրելու համար[10], իսկ «Բոինգ» ընկերությունը, կաշառելով քաղաքացիական օդատորմիղի մինիստր Նուհին, Եգիպտոսին վաճառեց խոտան շարժիչներով ինքնաթիռներ[11]։

Չէր լուծվում նաև բնակարանային սուր խնդիրը։ 1979 թ. Եգիպտոսը կարիք ուներ 1,11 մլն. բնակարանի, բայց կառուցվեց միայն 27 հազար։ 1980 թ. Կահիրեում անօթևանների թիվը հասավ 400 հազարի։ Տարեկան մոտ 80 հազ. կահիրեցիներ թողնում են իրենց բնակարանները։ Արագ աճող բնակվարձը նրանց կարողություններից վեր է, քանի որ տանտերերը պահանջում են երկրում միջին ամսական աշխատավարձը 100 անգամ գերազանցող մի գումար։

70-ական թթ. ընթացքում կառավարությունը ի վիճակի չեղավ լուծել նաև փոխադրամիջոցների խնդիրը։ Մոտ 10 միլիոնանոց Կահիրեի բնակչությանը հասնում էր ընդամենը 11 հազ. ավտոբուս։ Ալեքսանդրիա քաղաքի փոխադրամիջոցների գլխավոր վարչությունը ճապոնական «Միցուբիսի» ընկերությունից գնեց տրամվայի հնացած նմուշներ, հրաժարվելով ՁՍՍՀ-ի արտահանող կազմակերպությունների օգտավետ առաջարկից։ Այդ շահանենգության մասնակիցների հասցրած ընդհանուր վնասը գնահատվեց 8 մլն. դոլար[12]։

«Բաց դռների» քաղաքականությունը դիպչում-էր նաև գյուղատնտեսությանը։ «Ինֆիթահի» քաղաքականության շրջանակներում եգիպտական գյուղում իրագործված սոցիալ-տնտեսական միջոցառումները ուղղված էին խոշոր և միջին հողատերերի մեջ ձեռնարկատիրական գործունեության քաջալերմանը։ Արդեն հիշատակված 1971 թ. վերափոխումներից բացի, նախկին խոշոր հողատերերի 600 ընտանիքների հողերի և ունեցվածքի վերադարձման համար 1974 թ. վերսկսվեց մի նոր արշավ, իսկ 1975 թ. օրենք ընդունվեց հողատերերի և վարձակալների միջև հարաբերությունների փոփոխման վերաբերյալ։ Վարձավճարի չափը բարձրացվեց 20—25 տոկոսով, հողատերերն իրավունք ստացան լուծարքել վարձակալման պայմանագիրը, եթե գյուղատնտեսության տարեշրջանի ավարտից երկու ամիս անց վարձակալողը մուծած չլինի վարձավճարը։ Նոր հողերի յուրացման խնդիրը լուծելիս կառավարությունը ձգտում էր ներգրավել մասնավոր կապիտալին՝ քաջալերելով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ խառն ընկերությունների ստեղծումը։ Ըստ եգիպտական մամուլի հաղորդումների, այդպիսի ընկերությունների ստեղծման վերաբերյալ համաձայնություններ ձեռք բերվեցին ԳՖՀ-ի, ԱՄՆ-ի, Հարավսլավիայի, Սուդանի հետ[13]։ Գյուղում տնտեսական «ազատականացման» քաղաքականությունը հանգեցրեց միջին ու խոշոր հողատերերի, հարուստ քաղաքացիների և առևտրականների կողմից հողերի ձեռքբերմանը։

Գյուղատնտեսության բնագավառում վերափոխությունները 70-ական թթ. կեսին ծնեցին նոր երևույթ՝ գյուղատնտեսական առևտրի պակասորդ։ Գյուղատնտեսական ներմուծման և արտահանման միջև ճեղքվածքը սկսեց անընդհատ մեծանալ և չնայած այն ծրագրերին, որոնք նպատակամղված են գյուղատնտեսական արտադրության ետ մնալու պատճառների վերացմանը, երկրի բնակչության աճի զսպմանը, որևէ նախադրյալ չկա, որ մոտակա տարիներին Եգիպտոսը կկարողանա իրեն ապահովել սննդամթերքով։

Գյուղատնտեսական մթերքների հարաբերականորեն աննշան ներմուծողից վերջին տարիներին Եգիպտոսը, մասնավորապես ցորենի ներմուծման գծով, գրավում է աշխարհում 5-րդ տեղը։ Այսպես, 1979 թ. գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը կազմեց 2 մլրդ. դոլար, որը երկու անգամ ավելի է գյուղատնտեսական արտահանումից և 7 անգամ գերազանցում է 1970—1973 թթ. ներմուծումը[14]։

Պետական հատվածի դիրքերի վրա հարձակման և մասնավոր ձեռնարկատիրական գործունեության քաջալերման քաղաքականությունը նպաստեց հասարակության սոցիալական շերտավորման ուժեղացմանը՝ մի կողմից պորտաբույծ բուրժուազիայի եկամուտների աճին, մյուս կողմից աշխատավորական լայն զանգվածների կենսամակարդակի ցածրացմանը։

80-ական թթ. սկզբին «բաց դռների» քաղաքականության կործանարար հետևանքների մասին սկսեց գրել նույնիսկ եգիպտական պաշտոնական մամուլը։ Այսպես, կառավարող Ազգային-ժողովրդական կուսակցության զեկուցագրում խոսվում էր եկամուտների բաշխման մեջ լուրջ խախտումների մասին։ Եվ իսկապես, 70-ական թթ. երկրում ընթանում էր եկամուտների վերաբաշխման պրոցես, հօգուտ ունևոր խավերի։ 1982 թ. սկզբի տվյալներով ԵԱՀ-ի բնակչության 1/20 տիրում էր ազգային համախառն արտադրանքի 80 տոկոսին այն ժամանակ, երբ եգիպտացիների 2/3-ը կիսաքաղց էր։

«Ինֆիթահի» քաղաքականության շնորհիվ հարստացած եգիպտացիների նոր խավը Սադաթի օրոք իրեն վստահ էր զգում, իմանալով, որ համարյա որևէ վերահսկողության չենթարկվելով ցածր վարձատրվող պաշտոնյաների կողմից, որոնց կաշառում էր, ինքը կարող է հասնել այն ամենին, ինչն իրեն պետք է։ Իրենց շրջապատելով շքեղությամբ, նորահարուստները ոչ միայն չէին փորձում սքողել այդ, այլ նույնիսկ կարծես ի ցույց էին դնում։ Դրանով իսկ նրանք գրգռում էին

բնակչության ընչազուրկ մեծամասնությանը։ Հենց այդ անսքող հակադրություններն էլ դարձան ֆունդամենտալիզմի տարածման և տարասեռ կրոնական ծայրահեղական խմբավորումների ազդեցության ընդլայնման գլխավոր պատճառներից մեկը, որոնց զոհն էլ դարձավ Սադաթը, որը ֆունդամենտալիստների աչքում մարմնավորում էր «ինֆիթահի»՝ որպես «արևմտյան կենսաձևի» դրսևորման արատները։

Որպեսզի մեղմի ժողովրդական լայն զանգվածներին և հանգստացնի բուրժուազիայի տարբեր խավերին, ԵԱՀ-ի նոր պրեզիդենտ Մուբարաքը առաջ քաշեց «պայքար կաշառակերության դեմ» կարգախոսը։ Սադաթի մահին հաջորդած ժամանակամիջոցում եգիպտական նորահարուստների ֆինանսական շահանենգությունների բացահայտման հետ կապված խայտառակությունները ավելի մեծ թափ ստացան։ Ըստ որում զերծ չմնացին նույնիսկ Սադաթի ընտանիքի անդամներն ու մերձավորները, որոնք մասնակցություն էին ունեցել շահութաբեր գործարքներին։ Կառավարության կողմից վերահսկվող մամուլը, պրեզիդենտ Մուբարաքի իշխանության գլուխն անցնելուց անմիջապես հետո, պահանջեց պաշտոնատար այն անձանց հեռացումը, որոնք կասկածվում էին կաշառակերության մեջ։

Գիտակցելով սոցիալական աղաղակող հակադրությունների սպառնացող պայթյունի վտանգավորությունը, իշխանություններն ամեն կերպ փորձում են ժողովրդին համոզել, թե իրենց ձգտումն է վերականգնել սոցիալական արդարությունը՝ անհոգ շահամոլների սանձահարումը, այլասերված տարրերին պատասխանատվության ենթարկելը։

Այսպիսին է եգիպտական տնտեսության մեջ «բաց դռների» քաղաքականության ձախողումների իրական պատկերը՝ տնտեսական զարգացման անկախ ուղու փոփոխման, ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ համակողմանի համագործակցությունից հրաժարվելու օրինաչափ հետևանքը։

Ж. А. МАНАСЯН

# ИЗДЕРЖКИ ПОЛИТИКИ «ОТКРЫТЫХ ДВЕРЕЙ» В ЭКОНОМИКЕ ЕГИПТА

Начало 70-х годов охарактеризовалось значительными переменами в социально-экономической жизни Египта: пришедшее к власти новое политическое руководство провозгласило политику «открытых дверей».

• В данной статье автор рассматривает проблему воздействия политики «открытых дверей» на экономику АРЕ в период нахождения у власти президента Садата.

Автор подчеркивает такие пагубные последствия этой политики как ослабление государственного сектора, усиление экономической зависимости АРЕ от развитых стран империалистического лагеря, усиление социальной дифференциации общества —рост доходов паразитической буржуазии с одной стороны, и снижение жизненного уровня широких трудящихся масс—с другой.

1 B. Hansen, K. Nashashibi. Egypt: foreign trade regimes and economic development. N., Y., 1975, p. 121.

2 А. Васильев, Социально-политическая эволюция Египта в 70-е годы—«Азия и Африка сегодня», № 6, 1978 г.

3 Law № 43 concerning the investment of Arab and foreign Funds and Free Zones. Cairo, 1977.

4. ١٩٧٦-١-١٤ ، الاخبار ، القاهرة

5 Moniteur du commerc, international, P., 1978, №. 283, p. 20.

6 MEED. December, 26, 1976.

7 National Bank of Egypt. Economic Bulletin, 1978, № 2, p. 137.

8 За рубежом, № 24, 1979.

9 Նույն տեղում, № 14, 1980 թ.

10 International Herald Tribunne. 27.10.1978.
11 الاخبار، ٢١-١-١٩٧٩
12 О. Г. Герасимов, А. Г. Князев, Египет. Десять лет после Насера, М., 1980.
13 الجمهورية، القاهرة، ٢١-٨-١٩٧٥
14 Foreign Agriculture, vol. 17, № 16.
15 «Правда», 16.02.1982.